

Հաստատված է

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի  
գիտական խորհրդի 2017թ. հունիսի 10-ի թիվ 24 նիստում

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի նախագահ \_\_\_\_\_ Ս. Ա. Առաքելյան

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ  
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ  
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

**ԻՋԵՎԱՆ 2017**

# 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «ԵՊՀ ԻՄ Բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» ղեկավար ձեռնարկը սահմանում է բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը, ընդհանուր բովանդակությունը, ուսանողի բեռնվածությունն ըստ կիսամյակների, կառուցամասերի և կրթամասերի, ուսումնական աշխատանքի ձևերի, ծրագրի դասընթացների և կրթական այլ մոդուլների կազմն ու աշխատածավալները՝ արտահայտված ECTS կրեդիտներով:

1.2. Բակալավրի կրթական ծրագիրը բաղկացած է 2 հիմնական կառուցամասերից՝ ընդհանուր կրթական և մասնագիտական, որոնցից յուրաքանչյուրով նախատեսված աշխատանքներն առկա և հեռակա ուսուցման համակարգերի համար իրականացվում են համաձայն աղյուսակ 1-ում և 2-ում ներկայացված աշխատածավալների համամասնության:

Աղյուսակ 1. Առկա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրի ընդհանուր կրթական և մասնագիտական կառուցամասերի հարաբերակցությունը

Կիսամյակ	I	II	III	IV	V	VI	VII	VIII	Ընդամենը
Ընդհանուր կրթական կառուցամաս, <i>կրեդիտ</i>	32		12		0	0	0	0	<b>44</b>
Մասնագիտական կառուցամաս, <i>կրեդիտ</i>	30		50		30	30	30	26	<b>196</b>
Ընդամենը, <i>կրեդիտ</i>	31	31	31	31	30	30	30	26	<b>240</b>

Աղյուսակ 2. Հեռակա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրի ընդհանուր կրթական և մասնագիտական կառուցամասերի հարաբերակցությունը

Կիսամյակ	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	Ընդամենը
Ընդհանուր կրթական կառուցամաս, <i>կրեդիտ</i>	32		12		0	0	0	0	0	0	<b>44</b>
Մասնագիտական կառուցամաս, <i>կրեդիտ</i>	16		36		24	24	24	24	22	26	<b>196</b>
Ընդամենը, <i>կրեդիտ</i>	24	24	24	24	24	24	24	24	22	26	<b>240</b>

1.3. Առկա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրի տևողությունը 4 տարի է (8 կիսամյակ): Ուսումնական կիսամյակի համար սահմանվում է 20-շաբաթյա տևողություն, որից 15 շաբաթը հատկացվում է լսարանային պարապմունքներին, 2-ը՝ ընթացիկ քննություններին և ստուգարքներին, իսկ 3-ը՝ եզրափակիչ քննություններին:

- 1.4. Հեռակա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրի տևողությունը 5 տարի է (10 կիսամյակ): Ուսումնական կիսամյակի համար սահմանվում է 16-շաբաթյա տևողություն, որից 4 շաբաթը հատկացվում է լսարանային պարապմունքներին, 8-ը՝ ինքնուրույն աշխատանքին, խորհրդատվություններին և ընթացիկ քննություններին, իսկ 4-ը՝ եզրափակիչ քննություններին: Ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ և տնօրենի թույլտվությամբ լսարանային պարապմունքները, տրված ժամաքանակների սահմաններում (իսկ լեզվական մասնագիտությունների գծով՝ նաև ժամաքանակի ավելացմամբ), կարող են իրականացվել նաև այլ գրաֆիկով:
- 1.5. Բակալավրի կրթական ծրագրի կառուցման հիմքում դրված է 240 կրեդիտ ուսումնական բեռնվածությունը, որն առկա ուսուցման մեկ կիսամյակի համար կազմում է 30 կրեդիտ (10% թույլատրելի շեղումով), իսկ հեռակա ուսուցման դեպքում՝ 24 կրեդիտ (10% թույլատրելի շեղումով): Ուսանողի շաբաթական լրիվ ուսումնական բեռնվածությունն առկա և հեռակա ուսուցման համար 1,5 կրեդիտ է ( $30 \text{ կրեդիտ} / 20 \text{ շաբաթ} = 1,5$  կամ  $24 \text{ կրեդիտ} / 16 \text{ շաբաթ} = 1,5$ ) կամ 45 ժամ, իսկ ուսումնական կրեդիտի ժամային համարժեքը՝ 1 կրեդիտ = 30 ժամ:
- 1.6. Ընդհանուր կրթական կառուցամասի աշխատածավալը ծրագրի 240 կրեդիտ ընդհանուր ծավալում կազմում է առավելագույնը 44 կրեդիտ (18%), իսկ մասնագիտական կառուցամասինը՝ նվազագույնը 196 կրեդիտ (82%): Երկու կառուցամասերն էլ ներառում են տարբեր կրեդիտատարությամբ դասընթացներ և ուսումնական մոդուլներ: Ընդհանուր կրթական կառուցամասն ընդգրկում է պարտադիր և կամընտրական դասընթացներ: Մասնագիտական կառուցամասը ներառում է պարտադիր, կամընտրական կամ հատուկ մասնագիտական դասընթացներ, ինչպես նաև կրթական այլ մոդուլներ (կուրսային աշխատանքներ, պրակտիկա (ներ) և 20 կրեդիտ ծավալով ավարտական աշխատանք):
- 1.7. Առկա ուսուցման բակալավրի կրթական ծրագրում ուսանողի շաբաթական առավելագույն լսարանային բեռնվածությունը 1-ից 4-րդ կիսամյակներում կազմում է մինչև 30 ժամ, իսկ 5-ից 7-րդ կիսամյակներում՝ մինչև 28 ժամ: Առկա ուսուցման 8-րդ, իսկ հեռակա ուսուցման՝ 10-րդ կիսամյակներում լսարանային բեռնվածություն չի նախատեսվում: Կրթական այն ծրագրերում, որտեղ նախատեսվում են ուսումնական պրակտիկաներ՝ տվյալ կիսամյակի լսարանային բեռնվածությունը համապատասխանաբար նվազում է:
- 1.8. Հեռակա ուսուցման բակալավրի ծրագրի դասընթացների լսարանային աշխատանքի ժամաքանակը սահմանվում է առկա ուսուցման ձևի լսարանային

ժամերի 1/3-ի չափով, իսկ մնացածը նախատեսվում է ուսանողի ինքնուրույն աշխատանքի համար:

- 1.9. Ծրագրի բաղկացուցիչ դասընթացների կրեդիտներով արտահայտված աշխատաձևավոր հաշվարկվում է՝ էլնելով աղյուսակ 3-ում ներկայացված ժամային համամասնություններից<sup>1</sup>:

Աղյուսակ 3. Դասընթացի (մոդուլի) ինքնուրույն աշխատաձևավոր որոշման նորմերը

Դասընթաց/մոդուլ			
Շաբաթական լսարանային պարապմունք			Շաբաթական ինքնուրույն աշխատանք
Ժամ	պարապմունքի ձևը		Ժամ
1	դասախոսություն	+	1 – 2 <sup>2</sup>
1	սեմինար/գործնական	+	0.75 – 1.5
1	լաբորատոր	+	0.5-1

1.9.1. Դասընթացի (մոդուլի) շաբաթական լրիվ աշխատաձևավոր որոշվում է ուսանողի լսարանային և ինքնուրույն աշխատանքի ժամաքանակների գումարով: Ելնելով լսարանային պարապմունքի ձևից և համապատասխան ժամաքանակից՝ որոշվում է ուսանողից պահանջվող ինքնուրույն աշխատանքի ծավալը, որի և լսարանային ժամաքանակի հանրագումարը կազմում է դասընթացի շաբաթական լրիվ աշխատաձևավոր:

1.9.2. Դասընթացին հատկացվող կրեդիտների քանակը որոշվում է՝ շաբաթական լրիվ բեռնվածությունը բազմապատկելով 15 շաբաթի և ստացված գումարը 30 ժամի վրա բաժանելով:

1.9.3. Դասընթացին հատկացվող լսարանային ընդհանուր ժամաքանակը չի կարող գերազանցել ինքնուրույն աշխատանքների համար նախատեսվող ժամաքանակը:

<sup>1</sup> Դասընթացի կրեդիտը (աշխատաձևավոր) պայմանավորված է պարապմունքի ձևով, դասավանդման և ուսումնառության մեթոդներով, դասընթացի բովանդակային առանձնահատկություններով և այլն: Մինևույն լսարանային ժամաքանակի պարագայում տարբեր դասընթացներ կարող են ունենալ տարբեր աշխատաձևավորներ, հետևաբար՝ նաև կրեդիտներ:

<sup>2</sup> Պահանջվող ինքնուրույն աշխատանքի շաբաթական ժամաքանակը տրված միջակայքում որոշում է ամբիոնը՝ հաշվարկելով 1 ժամ լսարանային պարապմունքի ընթացքում մատուցված նյութը յուրացնելու համար ուսանողից պահանջվող իրական ժամաքանակը:

1.10. Առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրերի ուսումնական պլանի ձևաթերթերը ներկայացված են համապատասխան հավելվածներում:

## 2. ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

### 2.1. Ընդհանուր կրթական կառուցամաս

*Ընդհանուր* կրթական կառուցամասը նպատակաուղղված է բակալավրի որակավորման ընդհանուր հենքի (ընդհանրական/փոխանցելի գիտելիքներ և կարողություններ) ապահովմանը: Այն ընդգրկում է պարտադիր և կամընտրական դասընթացներ:

2.1.1. ***Պարտադիր դասընթացների*** ընդհանուր աշխատածավալը 38 կրեդիտ է, որը ներառում է 11 դասընթաց (մոդուլ) և Ֆիզդաստիարակությունը, որի համար կրեդիտ չի հատկացվում (տե՛ս Հավելված 1, 2, 3 և 4): Այս դասընթացները հիմնականում իրականացվում են 1-ին կուրսում և նպատակաուղղված են ուսանողների ընդհանրական (փոխանցելի) գիտելիքների և կարողությունների ձևավորմանը և զարգացմանը, ինչպես օրինակ՝ մայրենի և օտար լեզուներով գրավոր և բանավոր հաղորդակցմանը, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմանը, արտակարգ իրավիճակներում ճիշտ և կազմակերպված կողմնորոշմանը և այլն:

2.1.2. ***Կամընտրական դասընթացների*** ընդհանուր աշխատածավալը 6 կրեդիտ է և ներառում է 2 կրեդիտանոց 3 դասընթաց (տե՛ս Հավելված 1, 2, 3 և 4): Կամընտրական դասընթացները նպատակաուղղված են ուսանողների իրավաքաղաքական, սոցիալ-տնտեսական, բնագիտական և մշակութային ընդհանուր գիտելիքների ձևավորմանը և զարգացմանը: Կամընտրական դասընթացներն իրականացվում են 2-րդ կուրսում, իսկ ուսանողների կողմից դրանց ընտրությունը կատարվում է 1-ին կուրսի 2-րդ կիսամյակում՝ մինչև ապրիլ 1-ը: Կամընտրական դասընթացների բաշխումն ըստ ֆակուլտետների և կիսամյակների իրականացվում է Ուսումնամեթոդական վարչության հետ համատեղ: Կամընտրական դասընթացների առաջարկվող ցանկն ընդգրկում է միայն 2 կրեդիտանոց դասընթացներ: Վերոնշյալ ցանկը յուրաքանչյուր ուսումնական տարվա համար կարող է վերանայվել ԵՊՀ ԻՍ գիտխորհրդի որոշմամբ: Կամընտրական դասընթացը կայանում է, եթե դրանում ընդ-

գրկված են նվազագույն թվով ուսանողներ (համաձայն՝ ԵՊՀ ԻՍ դասախոսական կազմի ուսումնական և ուսումնամեթոդական բեռնվածության հաշվարկի նորմերի): Անհրաժեշտության դեպքում կարող են ձևավորվել միջֆակուլտետային հոսքեր:

## 2.2. Մասնագիտական կառուցամաս

*Մասնագիտական* կառուցամասը նպատակաուղղված է բակալավրի որակավորման մասնագիտական հենքային գիտելիքների և կարողությունների ձևավորմանը և զարգացմանը: Այն ընդգրկում է պարտադիր մասնագիտական, կամընտրական կամ հատուկ մասնագիտական դասընթացներ և կրթական այլ մոդուլներ: Մասնագիտական կառուցամասի պարտադիր և կամընտրական (հատուկ մասնագիտական) մոդուլ-դասընթացների ընդհանուր քանակը չպետք է գերազանցի 42-ը:

2.2.1. *Պարտադիր մասնագիտական դասընթացների* աշխատածավալը 154 կրեդիտ է, իսկ հատուկ մասնագիտական դասընթացների առկայության պարագայում՝ 142 (տե՛ս Հավելված 1, 2, 3 և 4): Այս կրթամասի բովանդակությունը, դասընթացների կազմն ու դրանց կրեդիտատարությունը որոշում են ծրագիրն իրականացնող ֆակուլտետները և ամբիոնները՝ ապահովելով բակալավրի կրթական մակարդակում տվյալ մասնագիտության համար պահանջվող գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերումը: Դրանք մշակվում են՝ հաշվի առնելով որակավորումների ազգային (առկայության դեպքում նաև ոլորտային) շրջանակների և մասնագիտական աշխատաշուկայի արդի պահանջները, ինչպես նաև տվյալ մասնագիտության միջազգային ծրագրային չափանիշները և հենանիշները:

2.2.2. *Կամընտրական մասնագիտական դասընթացներն* ապահովում են ուսանողի նեղ մասնագիտական նախասիրություններով պայմանավորված հատուկ գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը: Կամընտրական մասնագիտական դասընթացների ընդհանուր աշխատածավալը 12 կրեդիտ է: Առաջարկվող դասընթացների ցանկը ներառում է ընտրվող դասընթացների քանակից կրկնակի ավել և մինչև կրեդիտատարությամբ դասընթացների քանակից կրկնակի ավել և մինչև կրեդիտատարությամբ դասընթացներ: Այս կամընտրական դասընթացներն իրականացվում են 5-7-րդ (հեռակա ուսուցման դեպքում՝ 7-9-րդ) կիսամյակներում:

2.2.3. *Հատուկ մասնագիտական դասընթացներ.* Կրթական ծրագրի կառուցվածքում, ելնելով մասնագիտության առանձնահատկություններից, կամընտրական մասնագիտական դասընթացների փոխարեն կարող են նախատեսվել հատուկ

մասնագիտական դասընթացներ: Դրանք նպատակաուղղված են մասնագիտության որևէ նեղ ոլորտում խորացված գիտելիքների և կարողությունների ձեռքբերմանը: Հատուկ մասնագիտական դասընթացների ընդհանուր ուսումնական աշխատաժամվալը 24 կրեդիտ է: Դասընթացներն իրականացվում են 5-7-րդ (հեռակա ուսուցման դեպքում՝ 7-9-րդ) կիսամյակներում:

**2.2.4. Կրթական այլ մոդուլներ.** Ծրագրի կրթական այլ մոդուլների աշխատաժամվալը 30 կրեդիտ է, որը ներառում է 2 կրեդիտանոց 2 կուրսային աշխատանք, 6 կրեդիտ աշխատաժամվալով մասնագիտական պրակտիկա (կրթական ծրագրի առանձնահատկություններից ելնելով՝ կարող է ներառվել նաև համապատասխան աշխատաժամվալով ուսումնական պրակտիկա) և 20 կրեդիտ աշխատաժամվալով ավարտական աշխատանք:

1. Կուրսային աշխատանքները նախատեսված են մասնագիտական ոլորտում ստացված տեսական գիտելիքները գործնականում կիրառելու կարողությունների զարգացմանը: Կուրսային աշխատանքները կատարվում են 5-ից 7-րդ (հեռակա ուսուցման դեպքում՝ 7-ից 9-րդ) կիսամյակներում և գնահատվում են 20 միավորանոց սանդղակով: Կուրսային աշխատանքի կատարման կիսամյակում համապատասխանաբար նվազում է այդ կիսամյակի լսարանային բեռնվածությունը (ժամերը):

2. Մասնագիտական պրակտիկան կազմակերպվում է 8-րդ (հեռակա ուսուցման դեպքում՝ 10-րդ) կիսամյակում՝ համապատասխան ամբիոնի (կենտրոնի, ինստիտուտի) կողմից կազմված և հաստատված ծրագրով: Այն կազմակերպվում է մասնագիտական ուղղվածություն ունեցող ձեռնարկություններում և հաստատություններում՝ 6 կրեդիտ աշխատաժամվալով և 6 շաբաթյա տևողությամբ, որն ավարտվում է ստուգաբաժնով: Ուսանողները պրակտիկայի կատարման վերաբերյալ ներկայացնում են սահմանված ձևաչափի և բովանդակության հաշվետվություն: Մասնագիտությամբ աշխատող ուսանողն ազատվում է մասնագիտական պրակտիկայից՝ աշխատանքի վայրից ներկայացնելով համապատասխան տեղեկանք:

3. Այս բաժնում, ելնելով մասնագիտության առանձնահատկություններից, կարող են նախատեսվել նաև պրակտիկայի այլ ձևեր, որոնց իրականացման կիսամյակը և կրեդիտատարությունը (շաբաթները) որոշում է ֆակուլտետը կամ մասնագիտացնող ամբիոնը (պահպանելով 1 շաբաթ = 1 կրեդիտ համամասնությունը): Ծրագրում պրակտիկայի այլ ձևեր նախատեսելու դեպքում համապատասխանաբար նվազում է պարտադիր մասնագիտական դասընթացների քանակը,

կրեդիտների ընդհանուր թիվը, ինչպես նաև լսարանային բեռնվածությունը (ժամերը):

4. Ավարտական աշխատանքը բակալավրի կրթական ծրագրի անհատական և ամփոփիչ բաղադրիչն է, որի պատրաստումը և պաշտպանությունն առկա ուսուցման դեպքում իրականացվում է 8-րդ, իսկ հեռակա ուսուցման դեպքում՝ 10-րդ կիսամյակում: Բոլոր ուսանողները մինչև 7-րդ (հեռակա ուսուցման դեպքում՝ 9-րդ) կիսամյակի ավարտը պետք է ունենան ավարտական աշխատանքի հրամանագրված թեմաներ և ղեկավարներ: Հրամանագրումն իրականացնում է ֆակուլտետը: Ավարտական աշխատանքի ձևաչափին և բովանդակությանը ներկայացվող պահանջները սահմանվում են համաձայն՝ «Երևանի պետական համալսարանում ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգի»: Ավարտական աշխատանքի պատրաստման և պաշտպանության համար ծրագրում նախատեսվում է 20 կրեդիտ ուսումնական բեռնվածություն:

### **3. ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆՆԱԿԱՆ ԲԵՐՆՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ**

Բակալավրի ծրագրի բաղկացուցիչ դասընթացների կազմն ու բովանդակությունը, ինչպես նաև դասավանդման, ուսումնառության և գնահատման ձևերն ու մեթոդներն ընտրվում են այնպես, որ բավարարեն ոլորտը կարգավորող հետևյալ պաշտոնական փաստաթղթերի պահանջները.

1. *ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի մակարդակների նկարագրիչներով բակալավրի որակավորման աստիճանի համար սահմանված կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը՝ արտահայտված գիտելիքների, կարողությունների և հմտությունների անհրաժեշտ կազմով<sup>3</sup>:*
2. *ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ոլորտային շրջանակի (առկայության դեպքում) որակավորումների նկարագրիչներով տվյալ մասնագիտությամբ բակալավրի որակավորման աստիճանի համար սահմանված կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը՝ արտահայտված գիտելիքների, կարողությունների և հմտությունների անհրաժեշտ կազմով:*

<sup>3</sup> ՀՀ կառավարության 2016 թ. հուլիսի 7-ի N 714-Ն որոշումը ՀՀ որակավորումների ազգային շրջանակը հաստատելու մասին:

3. ԵՊՀ ԻՄ կրթական ծրագրերի մշակման ղեկավար ձեռնարկի<sup>4</sup> և կրթական ծրագրի մասնագրի<sup>5</sup> կազմման պահանջները:
4. Տվյալ մասնագիտական ոլորտում կիրառվող միջազգային ծրագրային կողմնորոշիչները և հենանիշները (բենչմարքները), տեղական և գլոբալ մասնագիտական աշխատաշուկայի պահանջները և այլն:

---

<sup>4</sup> ԵՊՀ կրթական ծրագրերի մշակման ղեկավար ձեռնարկ, 2012 թ.:

<sup>5</sup> ԵՊՀ կրթական ծրագրի մասնագրի լրացման ուղեցույց, 2016 թ.:







